Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2018 թվականի հունիսի 14-ի նիստին (6-րդ նիստ)

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.

«Զինծառայողների ապահովագրության» խորհրդի 5-րդ նիստից հետո (մարտի 5, 2018թ.) կատարվել են հետևյալ աշխատանքները.

I. 2018թ.-ի ՄԱՐՏԻ 05-ԻՑ ՑԱՅՍՕՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախորդ հաշվետվությունից մինչ օրս Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են հատուցումներ թվով 11 դեպքերի մասով, որոնցից 9-ը՝ զոհված զինծառայողների, 2-ը՝ հաշմանդամ զինծառայողների:

Զոհված 9 զինծառայողներից՝

- 8-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 1-ը՝ սպայական կազմի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 82 մլն. ՀՀ դրամ:

Հաշմանդամություն ունեցող 2 զինծառայողներից՝

- 1-ը՝ I խմբի հաշմանդամ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայող է, որին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ
- 1-ը՝ II խմբի հաշմանդամ, պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայող է, որին հասանելիք գումարը կազմում է 29 մլն. ՀՀ դրամ: Ընդ որում՝ հաշվի առնելով, որ հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ զինծառայողն ուներ երեք 18 տարին չլրացած երեխաներ՝ վճարվող ամսական գումարին ավելացվել է ամսական լրացուցիչ 100,000 ՀՀ դրամ:

II. 2017թ.-ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՑԱՅՍՕՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

	1.Պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված սպայական կազմի զինծառայողին		2. Պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրաված կամ կամավորագրված անձին		3.Պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին		Ընդամենը	
	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը
Զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում	7	82,800,000	4	52,800,000	26	273,800,000	***37***	***409,400,000***
Առողջությանը պատճառված վնասի հետևանքով (I խմբի հաշմանդամություն)	0	-	1	12,750,000	5	58,000,000	***6***	***70,750,000***
Առողջությանը պատճառված վնասի հետևանքով (II խմբի հաշմանդամություն)	3	18,300,000	2	13,000,000	2	11,600,000	***7***	***42,900,000***
Ընդամենը	10	101,100,000	7	78,550,000	33	343,400,000	***50***	***523,050,000***

III. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐ

1. **Նվիրաբերությունների հավաքագրում Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով ապրանքների վաճառքի միջոցով:**

2018թ.-ի ապրիլի սկզբին «ԿԱՖՖԱ» սուրճ արտադրող հայկական ընկերության հետ կնքվեց համաձայնագիր, որի արդյունքում մեկնարկել է Հիմնադրամի լոգոն արտացոլող սուրճի տուփերի վաճառքը: Հիմնադրամը ընկերությանը տրամադրել է իր լոգոն արտացոլող ինքնակպչուն 24 000 տիպեր՝ սուրճի տուփերի վրա փակցնելու նպատակով: Ընկերությունն ինքնակպչուն տիպերի դիմաց նվիրաբերությունները պետք է իրականացնի մաս առ մաս՝ 6 ամսվա ընթացքում, յուրաքանչյուր ամսվա 5-ին: Ցայսօր այս եղանակով հավաքագրված նվիրաբերությունների գումարը կազմում է 415 000 ՀՀ դրամ:

2. **«Ի պատիվ» և «ի հիշատակ» նվիրաբերություններ**

Հունիսի 12-ին կայքում մեկնարկեց «Ի պատիվ» և «Ի հիշատակ» նվիրաբերությունների իրականացման հնարավորությունը: Նվիրաբերության այս եղանակը թույլ է տալիս անձանց նշելու որևէ ուրախալի առիթ (ամուսնություն, երեխայի ծնունդ և այլն) կամ հարգելու որևէ անձի հիշատակը և միևնույն ժամանակ աջակցել Հիմնադրամի առջև դրված նպատակների իրականացմանը: Ընդ որում՝ համակարգը կառուցված է այնպես, որ նվիրաբերություն կատարելիս, նվիրաբերողի կողմից նշված հասցեատիրոջը Հիմնադրամն ուղարկում է նվիրաբերության հավաստագիր՝ նվիրաբերողի բարի գործի մասին տեղեկացնելու նպատակով:

IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ - 01 հունվար, 2017 – 13 հունիս, 2018

	Գումար	Տոկոս
Հատուցումներ	***523,050,000***	100%
Շարքային և կրտսեր ենթասպա	343,400,000	66%
Ենթասպա	78,550,000	15%
Սպա	101,100,000	19%
Պարտադիր վճարներ	***9,071,143,938***	
Հ.Հ. Կազմակերպություններից ստացված	7,860,547,262	
Հ.Հ. Ուժային կառույցներից ստացված	1,059,076,676	
Արցախի Հանրապետության կազմակերպություններից ստացված	141,577,000	
Արցախի Հանրապետության ուժային կառույցներից ստացված	9,943,000	
Նվիրաբերություններ	***182,083,416***	100%
Կայքի միջոցով	15,028,415	8%
Բանկային փոխանցմամբ	167,055,001	92%
«Հայփոստ» ընկերության թողարկած նամականիշերի միջոցով	4,243,100	
«Գուրմէ Դուրմէ» ընկերության՝ Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով շոկոլադե սալիկների վաճառքի միջոցով	500,040	
«Կաֆֆա» սուրճի վաճառքի միջոցով	415 000	

V. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵԿ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ 2018թ.-ի ՀԱՄԱՐ (5 ամիս):

1. Արցախի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ

	1	2	3	4	5
Վճարող կազմակերպություններ	1,970	1,936	1,850	1,603	148
Վճարող աշխատակիցների քանակ	35,262	35,564	35,426	32,954	2,377
Կազմակերպությունների կողմից վճարված գումար	35,262,000	35,564,000	35,426,000	32,954,000	2,377,000

2. Հայաստանի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ

	1	2	3	4	5
Վճարող կազմակերպություններ	25,713	25,237	23,229	21,190	4,867
Վճարող աշխատակիցների քանակ	462,312	463,343	436,247	389,012	48,693
Կազմակերպությունների կողմից վճարված գումար	462,312,000	463,343,000	436,247,000	389,012,000	48,693,000

VI. ԿԱՏԱՐՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ՝ 01 հունվար, 2017թ. – 13 հունիս, 2018թ.



VII. ՎԵՐԱԴԱՐՁԵՐ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների՝ 2018թ.-ի հունվարի 1-ից ապրիլի 30-ը Հիմնադրամը կազմակերպեց վճարված դրոշմանիշային վճարների վերադարձ՝

ա) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,

բ) զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,

գ) մեկից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) անձանց

Հիմնադրամը ստացել է 3187 դիմումներ:
Ստացված 3187 դիմումներից Հիմնադրամը ուսումնասիրել է բոլորը: Ուսումնասիրված դիմումներից մերժվել է թվով 37 դիմում:

	Դիմումների քանակ	Վերադարձված գումար
Ընդհանուր	***3,150***	***46,992,500***
1-ից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած անձանց	2527	38,953,500
ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	514	6,663,000
զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	109	1,376,000

VIII. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	Աշխատանք	Աշխատանքի արդյունք
1.	2017-2018թթ.-ի՝ դրոշմանիշային վճարների հետ վերադարձման գործընթացում առաջ են եկել մի շարք խնդիրներ և դժվարություններ, որոնց մեծամասնությունը կրում էին տեխնիկական բնույթ:	Հիմնադրամի աշխատանքային խմբի կողմից վեր են հանվել վերադարձման գործընթացում առկա բոլոր խնդիրներն ու բարդությունները, որոնց մի մասի արագ և արդյունավետ լուծումը հնարավոր է Կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու եղանակով: Ստեղծվել է Կառավարության որոշման փոփոխության նախագիծ
2.	Նվիրաբերությունների ներգրավմանն ու շարունակական բնույթ հաղորդելուն ուղղված աշխատանքներ:	Հիմնադրամի աշխատակիցների կողմից ստեղծվել է նվիրաբերություն կատարած անձանց տվյալների բազա (տվյալները հավաքագրվել են նվիրաբերողների կողմից տրված համաձայնության հիման վրա), որն իր մեջ պարունակում է տվյալներ ինչպես միանվագ, այնպես էլ ամսական նվիրաբերություն կատարող անձանց մասին: Ներկայումս Հիմնադրամի աշխատակիցները մշակում են «տեղեկատվական նամակներ (news letter)», որոնք իրենց մեջ կպարունակեն Հիմնադրամի կողմից կատարված աշխատանքի ամփոփ նկարագիրը, առկա նորությունները, ինչպես նաև ցանկացած տեղեկատվություն, որը կարող է հետաքրքրել նվիրաբերություն կատարող անձանց: Նշված նամակները յուրաքանչյուր ամիս էլեկտրոնային եղանակով կուղարկվեն Հիմնադրամ նվիրաբերություն կատարած անձանց: Տեղեկատվական նամակների նպատակն է էլ ավելի բարձրացնել Հիմնադրամի նկատմամբ վստահությունը, ավելացնել նվիրաբերությունների քանակը, շարունակական դարձնել կատարվող նվիրաբերությունները: